Հավելված N 18
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Իրավաբանական բաժինը (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ Նախարար) և գլխավոր քարտուղարի հրամաններով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով բաժնի պետի հետ:

4. Բաժնի ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է Նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով բաժնի պետի հետ:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրն է՝ իր իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը

վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման իրավական ապահովումը:

III. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) Նախարարության, Նախարարության զբոսաշրջության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության իրականացումը,

2) այլ մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության իրականացումը և դրա հիման վրա առաջարկությունների տրամադրումը,

3) պաշտոնական պարզաբանումների նախագծերի վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,

4) մշակված քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների ներկայացումը, ինչպես նաև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հավշառումն ու պահպանումը,

5) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիմումներում բարձրացված հարցերի ուսումնասիրությունը և դրա հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացումը պատասխանատու ստորաբաժանումներին,

6) ներքին և արտաքին ազդարարման դեպքում, հաղորդումներին ընթացք տալու, հաշվառելու, ձևակերպման ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգի ապահովումը,

7) Նախարարության և Կոմիտեի ստորաբաժանումներին իրավական օժանդակություն և խորհրդատվություն տրամադրելը,

8) Նախարարությանը, ինչպես նաև Կոմիտեին վերապահված իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության դատական և այլ պետական մարմիններում պետական շահերի պաշտպանության ապահովումը,

9) Նախարարության, նախարարության ենթակա պետական մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը.

10) Նախարարի հանձնարարությամբ Բաժինը իրականացնում է նաև նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV.ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը:

11. Բաժնի պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է Նախարարի, Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները.

3) անմիջական հաշվետու է Նախարարին:

12. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը՝ Բաժնի պետի ներկայացմամբ:

13. Նախարարության աշխատակազմի այլ ստորաբաժանման կողմից պատրաստված գրության նախագիծը ուսումնասիրվում է Բաժնի աշխատողների կողմից:

14. Բաժնի կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Բաժնի պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:

15. Բաժնի աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում: